ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«ՄԱՅՐ ՈՐԴԻՈՎ ԲԵՐԿՐԵԱԼ»

Քրիստոնեական եկեղեցին ամեն տարի, օգոստոսի 15-ին նշում է **«Վերափոխումն Սուրբ Աստվածածնի»** տոնը, իսկ մեր եկեղեցին՝ օգոստոսի 15-ի մերձավոր կիրակին:

Եկեղեցին խորին հարգանք, երախտագիտություն և սեր է տածել միշտ դեպի Ս. Կույսը. որպես **«Մայր փրկչի»**, **«Մայր հաստատութեան մարդկան»**, **«Բոլորից փրկութեան Մայր»**, **«Միշնորդ Աստուծոյ և մարդկան»**:

Աստվածածինը միաժամանակ քրիստոնեական զգացմունքների համար մարմնացումն է հավատավոր, առաքինի, անձնազոհ մոր, խտացումը՝ ընտանեկան սրբության, բարոյականության, որպես «սրբարան մաքրութեան և ընդունարան զգաստութեան»:

Մայրական զգացմունքն ու կոչումն են, որ բնութագրում են կնոջը, և տունն է հիմնաքարը հասարակության և օրրանը քաղաքակրթության:

«Կանայք են, որ ծնանին թագաւորս, ...և կանայք են, որ ծնանին և սնուցանեն զմշակսս» (եզր. Դ. 16):

Կնոջ գերագույն կոչումը մայր լինելու պարտականության մեջ է: Բայց ամեն կին չէ, որ տիպար մայր է:

Նախաքրիստոնեական մտածողության մեջ խոսվում է մոր նկատմամբ հարգանքի մասին միայն, որպեսզի զավակները «երկայնակեաց լինիցին ի վերայ երկրին բարութեան»:

Քրիստոնեությունն էր, որ առաջինը բարձրացրեց կնոջ հասարակական-ընտանեկան դերը, որպես մոր և դաստիարակչի:

«Չիք խտիր ոչ արուի, ոչ իգի, այլ ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս» (Գաղտ. Գ. 28):

Բարոյական, իմացական, ընկերային իր դերի և կոչման մեջ վերահաստատված կնոջ մեջ, միշտ գնահատվել և մեծարվել է, առաջին հերթին՝ մայրը՝ սիրով ու գորովով, անձնազոհությամբ տոգորված բարի էակը:

Ու Աստվածածինը կանանց մեջ գերազանց կերպարն է մոր, «Մայր որդւով բերկրեալ» (սաղմ. ՃԺԲ 9): Երկրի վրա պանդուխտ եկած Փրկիչը՝ Քրիստոսն անգամ մայր ունեցավ և սփոփվեց մայրական գուրգուրանքի և քաղցրության մեջ: Քրիստոս խաչի վրա կրած իր ծանր չարչարանքների մեջ իսկ չմոռացավ իր մորը և առաքյալների հոգածության, խնամքին հանձնեց «ամենեն սիրուն և սրբազան ժառանգությունը, զոր կթողուր երկրի վրա», այսինքն՝ իր մորը:

Առաքյալները, քրիստոնեական առաջին եկեղեցին, սրբությամբ և գուրգուրանքով պահեցին այդ թանկագին ավանդը:

Փրկչի համբարձումից հետո Ս. Կույսը շրջապատվեց ջերմ հոգածությամբ: Ղուկաս ավետարանիչը վկայում է, որ Համբարձումից հետո, երբ առաքյալները «դարձան յԵրուսաղեմ յանուանեալ լեռնէն Զիթենեաց... ելին ի վերնատունն, ուր վանքն իսկ էին», և նրանց հետ էր նաև Աստվածածինը «Սոքա ամենեքեան էին հանապազորդեալ միաբան յաղօթս հանդերձ կանամբք և Մարեամաւ՝ մարրն Յիսուսի» (գործք. Ա. 14): Ղուկասի վկայությունը վերջին ակնարկությունն է Ս. Կույսի մասին նոր կտակարանում:

Ըստ եկեղեցու ավանդության, Քրիստոսի համբարձումից հետո Աստվածածինը ապրում է 15 տարի և մահանում՝ Երուսաղեմում:

Ս. Կույսի ննջման կամ մահվան ներկա է լինում նաև Փրկիչը, «յերկնից իջեր Հօր Բան, ի յօր կուսի մօր քո ննջման. Տէրն տերանց խոնարհեալ յաւանդումն ամենասուրբ հոգւոյ մօր և կուսի»:

Նարեկացին այս առթիվ խորհրդածում է, խոսքը դիմառնաբար ուղղելով Ս. Կույսին. «Որ պացար հասեր ի բարձունս երկնից, իբր անընդունակ ապականութեան և մահու լուծման մարմին»: Ծնորհալին՝ որ վերափոխման տոնի եռօրյա հանդիսությունը վերածել է ինը օրերի տոնակատարության, գրում է դիմելով Փրկչին. «Խոստացար կուսին Տիրուհւոյ ի տիպ համայնիցն գալ վերընտրեալ՝ առնուլ առ քեզ յանճառ բնակութիւնսն»:

Մեր եկեղեցում, բացի Վերափոխման տոնից, Աստվածածնին են նվիրված հետևյալ տոները. «Յղութիւն Ս. Աստվածածնի յԱննայէ» (դեկտ. 9-ն), «Տօն ծննդեան Սրբոյ կուսին յԱննայէ» (սեպ. 8-ին), «Ընծայումն Սուրբ Աստուածածնի ի տաճարն երից ամաց» (նոյեմ. 21-ին), «Աւետումն Ս. Աստուածածնի» (ապր. 7-ին):

Փրկչի մոր հիշատակի հանդեպ եկեղեցու ցույց տված բարեպաշտ զգացմունքն ու հարգանքը բացատրվում է նրանով, որ Աստվածածինը փրկագործության խորհրդի մեջ համարվում է մարդեղության «գործնական պատճառ», մարդկային ազգի հոգևոր, բարոյական վերածննդյան և լուսավորության սկիզբը, «գլուխ և պատճառ մերոյ փրկութեան»:

Առաջին կինը՝ Եվան, եղավ պատճառը մարդկության անկման, իսկ Ս. Կույսը եղավ «պատճառ սկզբնաշաւիղ այսքանեաց բարեաց» (Նարեկացի):

Զ դարու մատենագիր Պետրոս Սյունեցին Ս. Կույսին նվիրված իր ներբողին մեջ Աստվածածնի կատարած մայրական պարտականության և դերի մեջ տեսնում է աշխարհի հոգևոր լուսավորությունը. «արեգակնաբար զաշխարհս ամենայն լուսաւորեաց ի նմանէ»:

Վերափոխման տոնը Ս. Կույսին նվիրված տոների մեջ հնագույնն է:

Եկեղեցու նշանավոր հայրերը՝ Դիոնեսիոս Արիսպագացին, Հերոնիմոսը, Օգոստինոսը, Ոսկեբերանը, Աթանասը, Կյուրեղը և ուրիշներ, խոսում են Վերափոխման տոնի մասին և ճառեր, ներբողներ ունեն նվիրված տոնի հիշատակության և խորհրդի: Ս. Սահակ Պարթևի կանոնների քառասուներեքերորդ կրոնական մեծ տոների՝ Զատկի, Հրգեգալստյան ու Վարդավառի շարքում, հիշվում է Ս. Աստվածածնի տոնը (հայոց եկեղեցական իրավունք, Ա. գիրք, էջ 528): Խորենացին Սահակ Արծրունուն գրած իր թղթում վկայում է նույնպես, որ իր ժամանակ հայ եկեղեցին կատարում էր «Տօնն Իսկուհւոյն»: Խորենացուն է ընծայվում նաև Աստվածածնի վերափոխման առաջին օրվա շարականի կանոնը՝ «այսօր ժողովեալ Սրբոցն ի միասին», ուր սրտառուչ կերպով պատմվում է այն մասին, որ «առաքեալք և Սուրբ կուսանքն» հավաքված, լուսապայծառ լապտերով Ս. Կույսին դնում են «առ դրանն գերեզմանին, սպասէին և ակն ունէին Տեառն», իսկ Տերը «եկեալ բազում հրեշտակօք և ամպեղէն կառօք» Ս. Կույսին փոխադրում է «յերկինս», «եւթնաստեղեան խորանս, ի լոյսն անստուեր, ի յառագաստ անապական յանմտանելին»:

Վերափոխման տոնի հետ առնչվում է նաև, հայ եկեղեցուն միայն հատուկ **Ս. Կույսի պատկերի** հիշատակը: Ըստ մեր ազգային ավանդության, հայ եկեղեցու առաջին լուսավորիչ առաքյալը՝ Բարթուղիմեոսը, բացակա է լինում Ս. Կույսի ննջման հանդիսության: Մյուս առաքյալները նրան մխիթարելու համար նվիրում են այն կենդանագիր պատկերը, որը Ս. Կույսը օրհնելուց հետո, հանձնել էր Հովհաննես ավետարանչին: Բարթուղիմեոս առաքյալը այդ նկարը բերում է Հայաստան և իր քարոզության և առաքելության ժամանակ պահում է Անձևացյաց աշխարհի **Դարբնոց Քար** կոչված վայրում, որտեղ և հիմնվում է առաջին հայ կուսանաց վանքը՝ «Հոգւոց» կամ «Հոգեաց» անունով, ուր խնամքով պահվում է Աստվածածնի պատկերը: «Մինչև վերջը կշարունակվեր պատկերին ուխտավորությունը, հակառակ, որ չկար ան ի միջի, զի կավանդեին, թե հալածողաց երեսեն պահելու համար զայն՝ հյուսած էին պատի մէջ» (Թորգոմ պատրիարք «Սուրբ և տօնք», Երուսաղեմ, 1939, էջ 311):

Հայ ժողովուրդը Աստվածածնի սրտառուչ կերպարի մեջ մարմնավորել է մայրության, բարության, սրբության, ընտանեկան պարկեշտության մասին իր բարոյական հասկացողությունները: Աստվածածինը հայ օջախի ոգին է, մեր նոր Անահիտը, «կեցուցիչ և խնամակալ հայոց և մայր ամենայն զգաստութեանց», որ «կեանք և լիութիւն» է պարգևում հայոց աշխարհին (Խորենացի): Մեր ամենագեղեցիկ շարականները, ներբողներն ու ճառերը նվիրվել են Աստվածածնին: Հայ եկեղեցիներից շատերը Աստվածածնի անունով են կառուցված: Մեր պատմությունն ու վկայաբանությունն էլ հարուստ են Աստ-

վսածածնի հավատով և օրինակով տոգորված տիպար մայրերով և կանանցով:

«Իմաստուն կանայք շինեցին զտունս» (առակ. ԺԳ 1):

Երջանիկ և բախտավոր է այն ժողովուրդը, որն ունեցել է ու ունի իր անցյալի պատմության մեջ որպես ներշնչարան և իր ներկա կյանքի օրերում որպես ուղեցույց տիպար մայրեր, օրինակելի կանայք:

Հավատավոր, առաքինի, հայրենասեր հայուհիների սրտառուչ կերպարները լցրել են մեր ողջ պատմությունը: Հայ կինը իր մտավոր ընդունակություններով, հոգևոր շնորհներով զարկ է տվել մեր մշակույթի և դպրության զարգացմանը. հավասար արիությամբ թափել է իր արյունը, իր քրտինքը, իր համոզումների, ազգային արժանապատվության, իր հավատքի և հայրենասիրության համար:

Հայ ժողովուրդը միշտ ունեցել է և ունի բարձր համարում ընտանեկան սրբությունների, ընտանեկան դաստիարակության մասին: Հասարակությունը գումարն է ընտանեկան օջախների: Հասարակությունը այնքան է զորավոր և հաստատուն, որքան իր ծոցում ունի բարոյապես, հոգեպես և կենսաբանորեն ամրոզ ընտանիքներ: Տիպար ընտանիք, նշանակում է տիպար հասարակություն, իսկ ընտանիքի բարի հոգին, պահապան հրեշտակը՝ մայրն է:

Այսօր էլ մեր ազգային-եկեղեցական, հասարակական-ընկերային կյանքում որպես ժողովուրդ և եկեղեցի, որքան կարիք ունենք տիպար հայուհիների, գերազանց մայրերի, զգացող, **մտածող**, **գործող** ազնիվ կանանց:

Երանի ամեն կին, որ մայր է դառնում, Ս. Կույսի նման ըմբռնի մայրության վսեմությունը, սրբությունը:

Եկեղեցին դաստիարակչական նպատակներով էլ մեծարում է Ս. Կույսի հիշատակը, որպես առաքինի կնոջ, ազնիվ, անձնազոհ մոր, դիմելով միշտ նրա բարեխոսությանը և սիրնորդությանը. «Մայր սուրբ սքանչելի լուսոյն... աղաչեա... զի լռեսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի»: